

176-

P-91

1750

176

P-91

2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽԱԼԱՅԵԱՆՑԻ

ԲԺ. Ս. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ԻՆՉ Է
ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆԸ

176
Բ-94

ԲԱԳՈՒ
Տպարան Արար
1899.

ԲՃ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

610
42-ԲՈ


16

94 ԱՐ



ԻՆՉ Է ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Մի քանի քաղաքացիներ և
Ա. Ստեփանյան



ԲԱՆԿՈՒ
Տպարան Արար
1899.

10044

176

2-91

խոսք 8 հատկա-
նական

164

29/1438

27/2-81

10044

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Сентября 1899 года.

108041-42

«Ժուժկալութիւնը ոչ երբէք վնասում է մարդու հոգուն կամ մարմնին: Այս գերազանց բարոյական օրէնքի պահպանութեամբ կարող է մէկը խաղաղ սրտով մտնել ամուսնական կեանք»:

«Թո՛ղ հասկանան ամենքը ժուժկալութեան խախտման բովանդակ վնասը, որպէս զի իւրաքանչիւրի մէջ հաստատուն կամք զարքնի մահառելու ախտերի դէմ՝ ինչ կերպով եւ արժայշուած լինին նրանք»:

«Ժամանակ է մի բարոյական միութիւն հաստատել, որի նպատակը լինի ի միջի այլոց ողջախոնորթիւն պահպանել մինչեւ ամուսնութիւն»:

6

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ուրիշ բաղաժիւ վատ ախտերի նման անառակու-
թիւնն էլ խորտակում է ժողովրդի ատողձապահութիւնը:

Ով որ կարողացել է դիտել վաղաժամ եւ անհա-
փահաս հասակի սեռական յարաբերութիւնների վատթար
հետեւանքները, կամ հետազօտել է վեներական կոշուած
սարսափելի հիւանդութիւնների օրէջօր տարածուիլն,
այնպիսին պէտք է համաձայնի անշուշտ՝ թէ անառակու-
թեան դէմ կռուելու համար տակաւին շատ քիչ բան է
կատարուած:

Յաճախ այս ախտերի պատճառները թաքնուած են
հասարակական կեանքի պայմանների մէջ, եւ քանի
այդ պատճառները կան, կարելի չէ եւ հետեւանքներն
օղնհացնել:

Վերջապէս շատ դժուար է երիտասարդների հետ
խօսել այդ բաների մասին այնպիսի մի լեզուով, որ անա-
բատ վարք ու բարքով մէկը սխալ ճանապարհով չգնայ,
իսկ վարակուածը՝ աւելի եւս չյուսահատուի, եւ վեր-
ջապէս մեր խօսքերն ուղիղ հասկացուին եւ հաւատ
ներշնչեն այդ բաներն ուղղելու համար:

Պէտք է առանձնապէս քննել օնանիզմի պատճառ-
ներն ու հետեւանքները. ցոյց տալ նախազգուշացման
ու բժշկման միջոցները. եւ այս բանին կարող է նպաս-
տել մեզանից ամեն մէկը, իսկ ծնողներն ու զատիւարակ-
ները՝ շատ դէպքերում կրհանին փայլուն հետեւանք-
ներին:

Դժբաղտաբար նոյն իսկ այնպիսի տեղերում ուր
ծնողները գտնուում են աւելի բարեխաջող պայմանների

մէջ՝ դարձեալ նոցանից շատերը տգիտութեամբ մեղանշում են իրանց զաւակների դաստիարակութեան գործում:

Փիլիսոփայ Սպենսերը շատ արդարացի է նկատում այդ առթիւ, «եթէ վաճառականը թուարանութիւն ու հաշուապահութիւն չգիտնալով՝ մտածէ գործ սկսել, աւանքը կըսկսին ծիծաղել վերան, բայց ոչ ոք չի զարմանալ՝ եթէ ծնողները ձեռնարկեն իրանց երեխաների դաստիարակութեան՝ առանց ծանօթ լինելու այն կանոններին, որոնցով պէտք է առաջնորդուին նրանց ֆիզիքական մտաւոր եւ բարոյական կրթութեան մէջ»: Մեր հասարակութիւնը դեռ եւս չէ սովորել ինքնուրոյն կերպով մտածել ու գործել առողջապահական հարցերում:

Մեր ազգն այլապէս չէ եւ այդ բանի գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ նա ոչ մի հասկացողութիւն չունի առողջապահութեան մասին: Մեր մէջ շատ տարածուած է ոգելից խմիչքների գործածութիւնը եւ սիգիլիսը (սխըմայ), իսկ այս բաներից յառաջանում են ջղային հիւանդութիւններ ու խելագարութիւն:

Այս դրքովով ցանկանում եմ մեր հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել ծնանիզմի եւ անժուժկալութեան վերայ, որ անչափ չարաչար վնասում է մեր երիտասարդների առողջութեան:

Ս. Պ. Բ. 1898 թ. հոկտեմբեր.

Բժ. Ա. Բուդուղեան.

Ա.

Մարդիկ ամենից շատ պէտք է ուշադրութիւն դարձնեն բարոյականութեան վրայ:

Բարեխիղճ ուսուցիչը որը ամենայն ուշադրութեամբ հետևում է իւր աշակերտների աշխատանքներին, երբեմն երբեմն նկատած կըլինի, թէ այս կամ այն աշակերտը՝ որ մի ժամանակ բոլորից լաւ էր աշխատում, յանկարծ անճանաչելի կերպով փոխւում է. նա դառնում է ծուլ, ցանցառ, չի կարողանում իւր ուշադրութիւնը կենդրոնացնել որեւէ առարկայի վերայ, խուսափում է ֆիզիքական եւ մտաւոր լարուած աշխատութիւններից, հնարում է զանազան պատճառներ, որպէս զի ուսումնարան չգնայ, շարունակ ստում ու խաբում է, եւ բարկացնում կամ վրդովում իւր ծնողներին ու դաստիարակներին:

Կարելի է ասել թէ այդպիսի երևոյթներից տասնից ինը հետևանք են վերոյիշեալ ախտին—օնանիզմին:

Բազմաթիւ մասնաւոր դէպքերից կարելի է ճշտութեամբ քննել ու ցոյց տալ այն ամենաեական պատճառները, որոնք այս ճանապարհով խախտում են մանկան բարոյական մաքրութիւնը: Պատահում են երեխաներ որոնք 7—8 տարեկան հա-

սակից սկսած՝ արդէն սաստիկ վարակուած են լինում այդ ախտով: 13—14 տարեկան երեխաներն օնանիզմով պարապում են մինչև իսկ օրը 3—4 անգամ, նոյն իսկ յաճախ դէպքեր են լինում, որ աշակերտները պարապում են փոխադարձ կերպով: Այս ախտով ուսումնարաններում վարակում են երբեմն և ամբողջ դասարաններ:

Երևում է որ գիւղական երեխաների մէջ այս ախտն աւելի սակաւ է տարածուած՝ քան քաղաքի ուսանող երիտասարդների մէջ:

Նա չէ խնայում ոչ մի հասակի երեխաների, բայց այս ախտին աւելի ենթարկուած են պատանիները, այսինքն՝ 12—14 տարեկան հասակի երեխաներ:

Ինչ վերաբերում է կանանց սեռին՝ պէտք է ասել. թէ այս տեղ էլ օնանիզմը կործուածից աւելի շատ է տարածուած: Օնանիզմի գլխաւոր պատճառները հետեւեալներն են:

Մեծ մասամբ երեխաները փոքր հասակից արդէն բռնվում են այս ախտով: Շատ անգամ այս բանում մեղաւոր են նրանց դայեակներն ու դաստիարակչուհիները, որոնք երեխաներին սովորեցնում են խաղալ սեռական անդամների հետ, որպէս զի իրանք զիշերը հանգիստ մնան: Շատ անգամ երեխաները վարակւում են այս ախտով ուսումնարանում: Այն երեխաները որոնք ճիճու ունեն, կարող են նոյնպէս վարակուիլ:

Արբունքի զարգացման շրջանում, այն է՝ 12 տարեկան հասակից սկսած, շատ հեշտ է զարգա-

նում և զգայնական դրդիւր: Երկդիմի խօսքեր ու հանաքներ, անհամապատասխան գրքերի ընթերցումն, լետոյ յայտնի տեսակի պատկերներին ծանօթանալը, այս բոլորը այնպէս են գրգռում երեխաների երեւակայութիւնը, որ այնուհետեւ շատ քիչ բան է մնում մինչև այս ախտին զոհ երթալը. երբեմն նոյն իսկ չնչին դէպքեր բուռական են լինում, որ երեխան վարակուի: Սուսնաճապէս ենթակայ են այն երեխաները, որոնք սովորութիւն ունին ձեռքերը միշտ իրանց գրպանում ման գալու:

Անմեղութեան ամենամեծ թշնամին՝ միայնութիւնն է. անգործութիւնն ու դատարկութիւնը նոյնպէս շատ են նպաստում այս ախտի տարածման. զինին, զարեջուրն ու արաղը՝ նոյնպէս չափազանց գրգռում են մեր զգայնութիւնները, ինչպէս և սուրճն ու թէյը գրգռում են երեխաների ջղերը:

Երկար նստելն էլ նոյնպէս խանգարում է արեան կանոնաւոր շրջանառութիւնը որովայնում, և այն ժամանակ արիւնն այնտեղ մնալով՝ գրգռում է սեռական գործարանները, և կամ սաստկացնում է երեւակայութեան ստեղծած գրգիւրը. Դասարանում 4—5 ժամ շարունակ նստելուց էլ առաջ է դալիս ջղերի գրգիւ, որև դառնում է արդէն օնանիզմի նախադուռ:

Այսպիսի հետեւանքների կարող է հասցնել երեխաներին նաև անբաւարար քունը: 13—14 տարեկան երեխաները պէտք է քնեն երեկոյեան ութին և վերկենան առաւօտեան ժամը 7-ին:

Վերջապէս այն երեխաներն ու երիտասարդները, որոնք գտնուում են գիշերօթիկ ուսումնարաններում, որտեղ նոցա այնքան լաւ չեն խնամում, աւելի ենթակայ են գայթակղութեան, քան այն երեխաները՝ որոնք դաստիարակուում են իրանց հոգատար մայրերի ձեռքով:

Մեծ քաղաքների երիտասարդներն աւելի շատ են շրջապատուած հրապօլրներով՝ քան գիւղական երիտասարդները:

Շատ անգամ մեր երիտասարդների վարակման պատճառները պէտք է փնտուել նաև հասարակական կեանքի պայմանների մէջ. և յիրաւի մեծ քաղաքներում բանուորական ընտանիքների երեխաների մէջ յաճախ կարելի է հանդիպել այս ախտով վարակուածներին:

Երբ երեխաները մի քիչ մեծանում են, գնում են աշխատանքի իրանց ծնողների հետ և այն տեղ լսում են շատ վատ հայհոյանքներ ու անվայել խօսքեր: Աշխատելով մեծերին նմանել ամեն բանի մէջ՝ նրանք ևս՝ սկսում են միմեանց հայհոյել, և անձնատուր են լինում արբեցութեան:

Բնակարանների փոքրութեան պատճառով նրանք պառկում են, ինչպէս պատահում է: Եւ կեանքի այսպիսի պայմաններում կարող են արդեօք մտածել բարոյականութեան մասին:

Բարոյականութեան թշնամին և երիտասարդների գաղտնի ախտերով պարապելու գլխաւոր պատճառը ալքոհոլն է. գարեջուրը, գինին և արա-

ղը մեռցնում են մարդկանց կամքի ոյժը և զարթեցնում են նրանց մէջ անասնական կրքեր:

Ոգելից խմիչքները թմրեցնում են այն պահապան խիղճը, որը զգայական ցանկութիւնները պահում է որոշ սահմանի մէջ:

Հարբած ժամանակ մենք չենք կարողանում մեր կրքերը սանձահարել: Բարոյականութեան դէմ գործուած բազմաթիւ յանցանքների 90% այդ բանի արդիւնքն է:

Իսկ բարոյականութիւնն առանց ժուժկալութեան կարող չէ գոյութիւն ունենալ:

Բ.

Խօսենք այժմ բարոյականութեան խախտման հետեանքների մասին:

Յաճախ պատահում ենք երիտասարդների, որոնք կարգալով մի քանի այսպիսի բովանդակութեամբ գրքեր՝ բոլորովին յուսահատուում են: Այնուհետև չափազանց դժուար է լինում հաւատներշնչել այդպիսիներին և համոզել, թէ կանոնաւոր կեանքը տակաւին կարող է փրկել նրանց օնանիգմից և նրա վատթար հետեանքներից:

Արդարև օնանիգմը խորտակում է մարդկանց թէ հոգին և թէ մարմինը: Մարմնի թուլանալը, որը առաջ է գալիս սեռական յարաբերութիւնից յետոյ, ցոյց է տալիս՝ թէ ո՛ր աստիճան առաջիկայում պէտք է ջղային խանգարում պատահի:

Եթէ սեռական բաւարարութիւն ստանալու

կարիքը սկսում է պատշաճաւոր հասակում և հետեւաբար յաճախ չի կրկնվում, և եթէ վերջապէս դրանից յետոյ մարմնին տալիս ենք հարկաւոր հանգստութիւն, այն ժամանակ դա մեզ ոչ մի վատ հետեւանքի չի հասցնիլ շատ անգամ:

Ուրիշ բան է՝ երբ սեռական բաւականութեան անձնատուր են լինում փոքր հասակից և այն էլ յաճախ, որ և պատահում է օնանիզմով պարագլոյի հետ: Ոչ ոք նրան չի խանգարում, որ պարագլի, և դժուար չէ մի ուրիշի համաձայնութիւնն ևս ստանալ, կամ բարեյաջող պայմաններ ստեղծել:

Ջղերի մշտական ուժգին խանգարումը թուլացնում և գրգռում է գլխի ու մէջքի ուղեղը, և քանի թուլանայ գլխի ուղեղի գործունէութիւնը, կը թուլանայ և կամքի ոյժը:

Որովհետեւ գլխի և մէջքի ուղեղներն են կառավարում մարմնի բոլոր շարժումները, այդ պատճառով երբ թուլանում է ջղային կենդրոնական դրութիւնը, վնասւում է և բոլոր գործարանների գործունէութիւնը: Իսկ դրա հետեւանքը կը լինի ախորժակի բացակայութիւն և փորի ամրութիւն:

Սիրտը՝ թոյլ կաշխատի և բոլոր գործարաններին բաւարար քանակութեամբ արիւն մատակարարել անկարող կը դառնայ: Թոքերը, կաշին, երիկամունքները ու լեարդը, որոնց պարտաւորութիւնն է արիւնը մաքրել, դանդաղ կը գործեն—իսկ դրանից կը ծագի արեան պակասութիւն և արեան անհամապատասխան բաշխում, մինչ դեռ ամբողջ

օրգանիզմի ստեղծողը արիւնն է: Դորա համար էլ մկանունքները շատ թոյլ կերպով են զարգանում, և նա դառնում է սառը ու տոգոյն:

Բոլոր գործարանները վատ են կերակրւում և իրանց գերը կատարում են անկատար կերպով, առանձնապէս վատ են կերակրւում մէջքի և գլխի ուղեղները, որոնք և այդ պատճառով վատ են գործում: Կամքի ոյժը ոչնչանում է, վաւաշոտ պատկերները բռնում են լուրջ մտքերի տեղը և դրա շնորհիւ հիւանդը անձնատուր է լինում տմեն օր 3—4 անգամ իւր ախտին—օնանիզմին: Եթէ այս ախտը մի քանի տարի շարունակուի, այն ժամանակ մարմինը կենթարկուի ամենասարսափելի քայքայման:

Հիւանդը իրան թոյլ կը գաայ, կը ծուլանայ կը գանգատուի որ իւր մէջքը ցաւում է: Փիղիքական լարուած աշխատանքն առաջ է բերում մարմնի անդամների և սրտի դող:

Ձեռներն ու ոտները նոյն իսկ ամառ ժամանակ սառն են լինում, գլխի մազերը սկսում են թափել:

Հիւանդի աչքերը անգորանում են, գլուխը ծանրանում, յաճախ փխսում է, միշտ փորկապութիւն է ունենում, անհանգիստ քուեն, որ ընհատւում է վաւաշոտ երեւոյթներով և յաճախ երազախաբ է լինում: Հիւանդն իրան շատ թոյլ է զգում:

Ուրախ հասարակութիւնն ու կանանց ներկայութիւնը նրան նեղացնում են մինչև իսկ զգուեցնում: Այդպիսիների համար ապրելն անգամ մի

ծանր լուծ է և նրանք յաճախ անձնասպանութեամբ վերջ են տալիս իրանց կեանքին:

Ի հարկէ օնանիգմը միշտ այսպիսի սարսափելի հետեւանքների չի հասցնում: Ով որ ուշ է սկսում և շատ քիչ է պարապում այս ախտով, կարելի է ասել, թէ նրա առողջութիւնն այնքան շատ չի վնասւում, բայց և այնպէս շատ վտանգաւոր է:

Այստեղ նկատւում է նոյն բանը, ինչ որ և հարբեցութեան ժամանակ. Ոչ մի երիտասարդ չի խմում այն դիտաւորութեամբ, որ արբեցող դառնայ, մինչ դեռ ամբողջ գոսակարգեր զոհ են գնում այդ ախտին: Այդ պատճառով անհրաժեշտ է բոլորովին հեռու կենալ:

Նկատելով որ երեխան ենթարկուած է օնանիգմին, անհրաժեշտ է հսկել նրա վրայ ուշադրութեամբ:

Եթէ երեխան ենթարկւում է օնանիգմի, շուտ շուտ առանձնանում է արտաքնոցում, և երկար մնում. խոյս է տալիս հասարակութիւնից, կորցնում է իւր աշխուժը, առաջուայ պէս չի ծիծաղում ու հանաքներ անում, մարդկանց աչքերին ուղիղ չի նայում, ուսումնարանում պարապմունքի ժամանակ իւր մտքով ով գիտէ ուր է գնում և տեսնում է միայն վաւաշոտ պատկերներ:

Կարգալու և գրելու ժամանակ մանուկը ձեռները սեղանի տակ է դնում, կամ մեծ մասամբ գրպանը:

Այսպիսի դէպքերում կարելի է նրան յանկարծակի բռնել, կամ թէ ալ և ալ հարցումներով ճշմարտութիւնն իմանալ:

Օնանիգմի նման ներգործում է մարդուս կազմուածքի վերայ նաև առհասարակ սեռական յարբերութիւնը:

Բայց ամենամեծ վնասը տալիս են սիֆիլիսն ու վեներական հիւանդութիւնները: Նորից կրկնում եմ, որպէսզի խուսափենք այդ հիւանդութիւններից, հարկաւոր է ժուժկալութիւն և միայն ժուժկալութիւն:

Այս սարսափելի հիւանդութիւնը — սիֆիլիսը — տարածւում է ամեն տեղ և չի ինայում ոչ մէկին, ոչ հարուստին, ոչ աղքատին, ոչ մեծին և ոչ փոքրին և ոչ երեխաներին: Կան գիւղեր որ ամբողջովին վարակուած են, իսկ մեծ քաղաքների մասին խօսելն աւելորդ է:

Բազմաթիւ անմեղ կանայք վարակւում են իրանց ամուսիններից, որոնք մինչև իրանց ամուսնանալը ենթարկուելով ըրպէական թուլութեան, մօտեցել են անառակ կանանց և վարակուել: Այս սօրուան օրս հազարաւոր երեխաներ տուժում են միմիայն իրանց ծնողների մեղքերի համար:

Ես համոզուած եմ, թէ շատ երիտասարդներ բոլոր ուժով կաշխատէին զսպել իրանց զգայական կրքերը, եթէ գոնէ մի անգամ շրջէին հիւանդանոցները և տեսնէին այս հիւանդութեան զարհուրելի հետեւանքները. քթի տեղ՝ մի փոքրիկ ծակ, կուրութիւն, խելագարութիւն և անգամալուծութիւն:

Ի հարկէ շատերն այդ հիւանդութիւնից կարող են բժշկուել, և կատարելապէս առողջանալու

Համար հարկաւոր է ամենաքիչը 3 — 4 տարի, բայց դժբախտաբար, այդպիսիներն սկզբում եռանդով բժշկուելուց յետոյ, հետզհետէ անհոգ են գտնվում, և որ աւելի ցաւալին ու սարսափելին է, ամուսնանում են և վարակում իրանց ամբողջ ընտանիքը: Եւ դեռ այդպիսին զարմանում է, որ իւր կատարելապէս առողջ կինը՝ յանկարծ սկսում է թուլանալ, նիհարել, գեղնել, գլխի ցաւով տանջուել և վերջապէս յղանալով՝ մինչև վեցերորդ ամիսը մի քանի երեխաներ է վիժում մէկը միւսի յետևից:

Հազարաւոր օրինակներ կարելի է բերել, որ երբ կանայք A—D անգամ երեխայ վիժելուց յետոյ զիջում են բժշկի և համապատասխան բժշկուելունը գործադրում, այն ժամանակ միայն ծընում են կենդանի և առողջ երեխաներ:

Ահա թէ այս հիւանդութեան համապատասխան զօրեղ բժշկութիւնն ինչ մեծ օգուտ է տալիս:

Բայց խուսափելու համար այդ սարսափելի հիւանդութիւնից՝ լաւ է որ թէ մարդիկ և թէ կանայք կոյս անարատ մնան մինչև իրանց ամուսնանալը:

Վեներական հիւանդութիւններից գլխաւորապէս տրիպերը քայքայում է օրգանիզմը, և յամուրթեամբ մնում է շատ երկար, նոյն իսկ ամբողջ տարիներ:

Այդ հիւանդութիւնը թէև տեղական է, այսինքն արիւնը չի վարակում, բայց զրա փոխարէն առաջ է բերում այն՝ որ միզային անցքը նեղանում է, և եթէ թարախը միզային խողովակի մի-

ջով վեր գնայ, այն ժամանակ առաջ կըգայ մի շատ վտանգաւոր հիւանդութիւն՝ երկամուկի բորբոքումն, որը կարող է մահ պատճառել:

Վարակումը կարող է առաջանալ նաև այն ժամանակ, երբ թէև թարախի հոսանքը խողովակից դադարել է, բայց և այնպէս մի քիչ մնացել է խողովակի մէջ. այդպիսի հիւանդը ամէն անգամ՝ երբ յարաբերութիւն ունենայ կնոջ հետ, կարող է վարակել նորան:


Կանանց տանջանքներին վերջ չկայ:

Մարդկութեան համար ինչ մեծ բարեք կըլինէր, որ թէ երիտասարդները և թէ օրիորդները տակաւին չամուսնացած՝ խորհուրդ անէին բժշկի հետ, և միմիայն իրանց առողջութեան համար վրկայական առնելուց յետոյ միանային ամուսնութեամբ:

Թող մեր քահանաներն առաջ քան պատկազրութիւնը՝ ամուսնացողներից առողջութեան վկայական պահանջեն, և յետոյ միայն պսակեն: Ապացուցուած փաստ է, որ սիֆիլիսով և արիպերով վարակուելու առաջն առնելու ոչ մի միջոց չկայ. հարկաւոր է միայն ժուժկալութիւն:

Այս ևս պէտք է տեսլ, թէ անառակ կանանց մեծ մասը հասարակական կեանքի դժբախտ զօհերն են. կարիքը, օրւան հացի կարօտութիւնը, ժառանգականութեան, կրթութեան, միջավայրի և մշտական արբեցութեան պակասութիւնը, կեանքի հրապոյրքն ու վեցարկութիւնը ձգած են այս թշուառ կանանց տխուր դժբախտութիւնը:

10044



որից գրեթէ երբէք չեն կարողանում ազատուել: Բայց հասարակութիւնը՝ իբրև մարդկութեան ճշմարիտ բարեկամ, պէտք է կարեկցի այդ ընկած կանանց. ուստի և իւր հոգածութեան առաջին կէտը պէտք է լինի նիւթականապէս բարւոքել աշխատաւոր կանանց վիճակը. կրթութիւն տարածել իգական սեռի մէջ, դաստիարակել ապօրինածին երեխաներին, պարտաւորել այլ մարդոց՝ որ խրնամեն իրանց ապօրինածին որդւոց, հաստատել կանանց համար ևս աշխատութեան տներ (ДОМЪ ТРУДОЛЮБІЯ), հաւասարապէս կրթել երկու սեռն էլ. ահա միջոցներ՝ որոնցով կարելի է հաստատել ու զօրացնել ժողովրդութիւնը (ողջախոհութիւնը)՝ չխօսելով հասարակական—տնտեսական կեանքի ընդհանրապէս վերանորոգութեան մասին:

Զպէտք է մոռանալ, որ շատ անգամ կարելի չէ ճանաչել, թէ անառակ կինը հիւանդ է արդեօք թէ ոչ: Բժշկական—ոստիկանական հետազոտութիւնները չեն կարող փրկել վարակումից: Շատ անգամ պատահում է որ ոչ-անառակ կանայք ևս վարակուած են լինում սեռական հիւանդութիւններով:

Ուրեմն վարակուելուց ազատ մնալու համար ամենալաւ միջոցն է՝ յարաբերութիւն չունենալ կանանց հետ մինչև ամուսնանալը:

Պ.

Երեխան որքան երկար պահպանէ իւր բարոյական մաքրութիւնը, այնքան էլ առաւել կրկարողանայ դիմադրել այս վատ ախտին:

Օնանիզմից և անժուժկալութիւնից զգուշանալն այնքան դժուար չէ, որքան նրանց հետ կրօնւելը, եթէ արդէն երիտասարդը անձնատուր է եղել նրանց...

Ընտանիք, դպրոց և դաստիարակներ՝ ամենքը միացած, պէտք է աշխատեն պահպանել երիտասարդների բարոյական մաքրութիւնը:

Բայց դժբախտաբար պէտք է ասել, թէ շատ ծնողներ մեծ յաճութեամբ յանձնում են իրանց որդւոց կրթութիւնը ուրիշներին, մոռանալով որ նոյն իսկ ամենալաւ դաստիարակուհին կարող չէ երեխային իբրև մայր խնամել:

Մայրերի համար չպէտք է լինի աւելի նշանաւոր ու գեղեցիկ բան՝ քան իւրեանց որդւոց դաստիարակութիւնը:

Պէտք է աշխատել՝ որ ընդարձակուի կանանց ուսումնարանների ծրագիրը. բացի ընդհանուր գիտութիւններից՝ պէտք է այն տեղ մեծ տեղ բռնեն նաև երեխաների դաստիարակութեան և առողջապահական գիտութիւններ: Ի զուր չէր ասում անմահ Բաքսին թէ «տուէք մեզ լաւ մայրեր և մենք կըտանք ձեզ լաւ երեխաներ»:

Այն երեխաները՝ որոնք ամբողջ օրը կամ հէնց օրուայ մի մասը առանց հսկողութեան են մնում, բարոյականութեան տեսակէտից կարող են մեծ վտանգի ենթարկուել...

Աղքատ մանուկների համար արդէն կան հիմնարկութիւններ, որոնք աշխատում են փրկել այդպիսիներին փողոցային ցոփ կեանքի հետեւանքներից:

Շատ ցանկալի է որ մանուկների համար սարքեն ցերեկօթիկ ապաստարաններ, մանկական պարտեզներ, որտեղ բաց օդում լինին խաղեր և մարմնամարզութիւն, նոյնպէս ընդհանուր զբօսոյթ փորձուած մանկավարժների հսկողութեան տակ. հակառակ դէպքում, այսինքն՝ առանց լաւ դաստիարակութեան՝ առաջ կը գտնուէր բազմաթիւ ապաստարաններ խեղճերի համար, հիւանդանոցներ և բանտեր:

Մեզ մօտ Կովկասում անընդհատ պատահում են աւազակութիւններ, որոնք առաջ են գալիս հասարակական և տնտեսական պայմաններից և գլխաւորապէս ուսումնարանների բացակայութիւնից և ամբօրի տգիտութիւնից:

Մեզ հարկաւոր է լոյս և միայն լոյս...

Շատ անգամ ծնողները մեծ եռանդով ձեռնաւոր են լինում իրանց որդւոց դաստիարակութեան և փոխանակ նոցա ինքնուրոյն և չարքաշ դարձնելով՝ դարձնում են մեղի և փափկակեաց:

Երեխաների կազմուածքը ամբողջելու ամենալաւ միջոցներն են՝ շարժումներ ազատ օդում, հէնց թէկուզ գնդակախօյ և լախտի, բաւարար և խոր քուն, պարզ աղբիւրի ջուր, անպատճառ զանազանակերպ թեթեւ սննդաբար կերակուրներ, օրինակ՝ կաթ, ձու, կանաչեղէն, մի քիչ միս. պէտք է խոյս տալ ամեն տեսակ սպիրտի խմիչքներից, որոնք առհասարակ կատարելապէս վնաս են երեխաներին:

Շատ վատ է երբ երեխային տալիս են հէնց

թէկուզ գինի—ամեն մի կաթիլը թոյն է երեխայի կազմուածքի համար:

Պ.

Ահա թէ ինչ պարտականութիւն ունին ծրնողները և թէ ինչպիսի ահագին ծառայութիւն կարող է անել հասարակութեան լաւ կազմակերպուած ուսումնարանը:

Անգլիայում և Միացեալ Նահանգներում ծրնողները երեխաների վերայ չեն նայում իբրեւ տան առարկաների վերայ և ոչ իսկ սեպհականութիւն համարում նրանց:

Անգլիացիք իրենց երեխաների հետ մանկութիւնից սկսած՝ վարվում են իբրեւ մեծի և իբրեւ մի անկախ անձնաւորութեան հետ. նրանք դաստիարակում են մանուկին ոչ այն պայմաններում, որոնց մէջ իրանք են եղել, այլ ապագայ նոր պահանջների համեմատ. հետեւում են ոչ միայն մանկան առողջութեան, այլ և կատարեալ ֆիզիքական զարգացման և եռանդի պահպանման: Նրանք անպատճառ երեխային սովորեցնում են մի որ և է արհեստ և վերջապէս վաղ հասակից ծանօթացնուն են նրանց գործնական կեանքի հետ:

Բայց որ ամենագլխաւորն է, նրանք կարծես ներշնչում են երեխային ողջախօհութեան գաղափարը: Շատ հազիւ է պատահում, որ անգլիացի երիտասարդը հասկացողութիւն չունենայ անժամանակեայ սեռական յարաբերութիւնների վատ-

Թար հետևանքների մասին, և այդպէս անարատ նա ամուսնանում է:

Իսկ մեզանում երիտասարդութիւնը ուղղակի փչանում է զանազան վեներական ախտերից: Իսկ մի այսպիսի սերունդից ինչ կարելի է սպասել եթէ ոչ այլասերումն: Այս տեսակ սկզբունքներով կրթուած անգլիական երիտասարդութիւնը ֆիզիքապէս շատ առողջ է լինում, գործնական կեանքին սովոր. նա յոյսը միայն իր վրայ է դնում և նայում է կեանքին իրբեւ մի լուրջ կռուի վրայ, որին կարելի է յաղթել միմիայն յամառ աշխատութեամբ և մեծ եռանդով:

Այս տեղ մեր խօսքը միայն մասնագիտական պատրաստութեան մասին չէ, և ոչ էլ որ և է առանձին գործի յարմարութիւնը վրայ, այլ բնաւորութեան ընդհանուր կրթութեան, եռանդի քարգացման, կշռադատութեան և յառաջադիմելու ձգտման մասին՝ չնայած ոչ մի դժուարութեան: Նշմարիտ է, անգլիացիք չափազանց մեծ տեղ են տալիս կրթութեան մէջ գործնական ուղղութեան, և արդէն նրանք վնաս են կրում՝ տեսական կրթութիւնը արհամարհելով:

Անգլիացիք չեն զրկում իրանց՝ կեանքի յարմարութիւններից, այլ աշխատում են ստանալ թէ գեղարուեստական և թէ մտաւոր բաւականութիւն:

Ոչ մի տեղ այնքան չեն փող ծախսում բարեգործական հիմնարկութիւնների վրայ, ոչ մի տեղ նրանք այնքան ընդարձակ ծաւալ չունին և ոչ մի

տեղ այնչափ իրական օգուտ չեն տալիս, որքան Անգլիայում:

Բացի վերոյիշեալ հիմնարկութիւններից՝ որտեղ աղքատներն ստանում են օգնութիւն, ոչ մի տեղ կարօտ կամ անապահով մարդիկ այնպէս չեն կարողանում օգնել միմեանց, ինչպէս այդ երկրում, որը ծածկուած է «բանուորական դաշնակցութիւնների» ցանցով:

Պէտք է նկատել՝ որ այդ օգնութեան կազմակերպութիւնը բոլորովին ինքնուրոյն է, և ծագում է հէնց իրանց—բանուորների—միջից և ոչ մի կապ չունի ընկերվարական (սոցիալական) շարժումների հետ:

Այդ բանուորական ընկերութիւնները, չխօսելով նիւթական շահի մասին, հաւաքւում են և պարապում խմբական երգեցողութեամբ, մարմնամարզութեամբ, երաժշտութեամբ և այլն:

Ունեւնք արդեօք մեր ժողովրդի համար մի այդպիսի բան, ոչ. բայց մենք ունինք գինետուն, անառակ կեանք, դաւաճանութիւն նոյն իսկ բնտանեկան կեանքում, վեներական հիւանդութիւններ, ողջախոհութեան խախտում — դարձեալ այլասերումն:

Անգլիացին ամեն տեղ իրեն համար որոշ նպատակ է դնում և անշեղ հետևում է նրան: Այդպէս է նա քաղաքականութեան, առևտուրի և մասնաւոր կեանքի մէջ: Նա երբէք անգործ չի մնում և առհասարակ միշտ ներգործական գեր է կատարում, սեպհական ուժով խառնվում թէ իւր

սեպհական գործի և թէ շրջապատող կեանքի մէջ:

Նախաձեռնութեան կենդանի ոգին և ինքն իր սեպհական ուժի վերայ յօյս դնելու սովորութիւնը, որ յատուկ է ամեն մի անգլիացու, զարձնում են նրան մի գորեղ ոյժ, որը կարող է վտանգաւոր լինել նրանց՝ սրոնց հետ նա ընդհարվում է:

Ե.

Առողջ միտքը առողջ մարմնի մէջ, այսինքն՝ մեր երեխաների և մեր երիտասարդների կրթութիւնը պէտք է լինի բարոյական, ֆիզիքական և մտաւոր: Այդ ոգւով կրթուած երեխաները իր ժամանակին միշտ կը հասկանան և կը զանազանեն չարը բարիից:

Եթէ մօտիկից ծանօթանանք մեր երիտասարդութեան հետ, հէնց թէկուզ մեր ուսանողների հետ, տեսնում ենք որ նրանք համարեա ոչ մի հասկացողութիւն չունին մարմնամարզութեան, խմբական երգեցողութեան, երաժշտութեան մասին և մտնելով մայրաքաղաքը կամ մի որ և է մեծ քաղաք, չգիտութեամբ ընկնում են աշնպիսի միջավայրի մէջ, որտեղ շատ թեթեւ են վերաբերվում կեանքին, և հէնց սկզբից վարակվում են վեներական ախտերով. բայց արդէն ուշ է. խախտուած է ժուժկալութիւնը, քայքայուած առողջութիւնը և պատրաստ է ապագայ անպէտք և հիւանդոտ սերունդը:

Հիւանդների մեծ մասը խորին ցաւ են յայտնում, որ ուշ ծանօթացան, այսինքն՝ միայն հի-

ւանդանալուց լետոյ աչք բաց արին: Եւ դրա համար էլ ծնողների, դատարարների պարտականութիւնն է ժամանակին, աստիճանաբար և խելացի կերպով ծանօթացնել իրանց սաներին սեռական կեանքի հիմունքների, նորա շեղումների և հիւանդութիւնների հետ:

Խուսափել բացատրութիւնից, աչքաթող անել այն բոլոր միջոցները, որոնցով կարելի է խելացի կերպով բացատրել սեռական կեանքի ամենակարեւոր գծերը և թողնել անօգնական այն երիտասարդին՝ որը գտնվում է արբունքի զարգացման մէջ — կատարեալ անխոհեմութիւն է:

Սեռական կեանքը իր պահանջները բացարձակ կը յայտնէ, որքան էլ որ մենք նրան շրջապատենք խորհրդաւորութեամբ:

Անտեղեակ և կանոնաւոր սեռական կեանքին անծանօթ ու անպատրաստ երիտասարդը կերթայ այն տեղ, որտեղ որ ձգէ նրան իւր կիրքը, յաճախ հէնց առաջին քայլում անդառնալի կերպով քայքայելով նրա առողջութիւնը: Իսկ սեռական կեանքին ծանօթ երիտասարդը գիտակցաբար է վերաբերվում սեռական զրգուլումներին, որովհետեւ նա պատրաստ է կռուելու, և ճանաչում է իրան սպառնացող վտանգը:

Զ.

Այժմ առաջ բերենք նշանաւոր գիտնականների կարծիքը ժուժկալութիւնը խախտելու մասին:

Հռչակաւոր պրօֆեսօր Կրաֆտ Էպինգն ա-
սում է, թէ «ժողովալութիւնը երբէք չի կարող
վտանգաւոր լինել առողջ մարդու հոգեկան և ջը-
ղային կեանքին»:

Յիւրիխի պրօֆեսօր Փօրէլը նոյն խնդրի մա-
սին ասում է հետեւեալը. «Ես չեմ նկատել, որ ժողով-
ալութիւնը հոգեկան հիւանդութեան պատճառ
լինի, մինչ գեռ տեսել եմ շատերին, որոնց հոգե-
կան հիւանդութիւնը առաջացել է սիֆիլիսից և
անկանոն կեանք վարելուց»:

Այժմ եթէ մի անբիծ երիտասարդ, բոլորովին
անտեղեակ սեռական կեանքին՝ գնում է բժշկի մօտ
և գանգատվում որ իր հետ շաբաթը մի անգամ
կամ նոյն իսկ երեք-չորս օրը մի անգամ երազախա-
բութիւն է պատահում—այն ժամանակ մթթէ
բժիշկը պէտք է նրան խորհուրդ տայ յաճախել
հասարակական տներ կամ առ հասարակ յարաբե-
րութիւն ունենալ կանանց հետ՝ իր վերայ առնե-
լով տրիպերով կամ սիֆիլիսով վարակուելու պա-
տասխանատուութիւնը, որ շատ կարելի և հաւա-
նական բան է:

Այս հարցի կտրուկ պատասխանն է «ոչ»: Նոյն
իսկ հասարակ տրիպերը շատ աւելի վտանգաւոր
է, քան կարծում են առ հասարակ, և յաճախ նրա
ցաւալի հետեանքները յայտնվում են առնական
հասակում: Այլ ևս չենք խօսում այն ազդեցու-
թիւնների մասին, որ նա թողնում է կնոջ վե-
րայ, երբ այդ մարդը չբժշկուած ամուսնա-
նում է:

Երիտասարդի համար մինչև ամուսնանալը
ժողովալութիւնը անհրաժեշտ է ոչ միայն բարոյա-
կան և գեղարուեստական, այլ և առողջապահա-
կան տեսակէտից: Սեռական կրքերի զսպումը հի-
ւանդութիւններ չի յառաջացնում, եթէ կեանքի
միւս պայմանները խելացի հիմքերի վերայ են
դրուած:

Լօնդոնի պրօֆեսօրներից մէկը, Լիօնէլ Բիլը՝
ասում է «Սուտ և անհիմն է այն կարծիքը թէ
տղամարդը՝ մինչև ամուսնանալը, ֆիզիօլոգիական
պատճառներից դրդուած՝ պէտք է բաւականու-
թիւն տայ իւր սեռական կրքերին»:

Անարատութիւնը, կրքերի խիստ սանձահարու-
թիւնը հաւասարապէս համապատասխան են թէ
ֆիզիօլոգիական և թէ բարոյական օրէնքներին:
Իսկ ցանկութիւններին և կրքերին բաւականու-
թիւն տալը չէ կարելի արգարացնել ոչ ֆիզիօլո-
գիական ու ֆիզիքական և ոչ էլ բարոյական ու
կրօնական պատճառաբանութիւններով»:

Ահա և Քրիստինայի բժշկական ֆակուլտետի
վկայութիւնը, «Թէ ողջախոհութիւնը և անարատ
կեանք վարելը վնասակար է առողջութեան—ինչ-
պէս պնդում են մի քանիսը—բժշկական ֆակուլ-
տետի բոլոր բժիշկ պրօֆեսօրների կարծիքով սուտ
և անհիմն է»:

Յայտնի չէ ոչ մի հիւանդութիւն կամ ախտ
որի մասին կարող լինինք ասել, թէ բոլորովին
մաքուր և ողջախոհ կեանքի հետեանք է»:

Վերջացնելով այս գիրքը աւելորդ չենք հա-

մարում մի քանի խօսք ևս ասել գերմանական
«Սպիտակ խաչ» ընկերութեան մասին, որի նպա-
տակն է՝ հսկել ժողովրդի ողջխառնութեան վերայ,
և տարածել նրա մէջ առողջ և անարատ կեանքի
հիմունքներ և կռուել անառակութեան դէմ, որ
առաջնորդում է դէպի այլասերումն, և որ ազգե-
րի կործանման պատճառն է:

Այդ նպատակով գերմանացիները Բերլինում
1890 թ. հիմնեցին մի ընկերութիւն «Սպիտակ խաչ»
անունով: Գտնուեցան շատ մարդիկ, որոնք ցան-
կացան մասնակցել այդ բարի գործին, այնպէս որ
արդէն 1894 թ. Յունիսի 1-ին նորա անդամների
թիւը հասաւ 6000-ի:

Նա կառավարվում է մի առանձին յանձնա-
ժողովի ձեռքով, որ կոչվում է «Կենդրոնական յանձ-
նաժողով»: Նրա պարտականութիւնն է՝ ընթերցա-
նութեան («Մի քանի խօսք երիտասարդներին» գրքի)
և քարոզի շնորհիւ ստիպել երիտասարդներին, որ
նրանք կազմեն ընկերութիւններ կռուելու անա-
ռակութեան դէմ: Նրանք որ արդէն մտել են այդ
ընկերութեան մէջ, Յանձնաժողովից ստանում են
այցեցումներ, որի վերայ նշանակուած է նրանց
համարը, որով ընկերութիւնը իմանում է այդ
շարժման ընդարձակութեան չափը:

Գերմանիայի բոլոր քաղաքներում այդ ընկե-
րութիւնը ունի գործակալներ, որոնք տեղեկու-
թիւններ են տալիս ընկերութեան մասին, ընդու-
նում են նոր անդամներ և յորդորում նրանց հե-
ռանալ անառակ կեանքից և վարել առողջ և անա-

րատ կեանք՝ հէնց իրանց բարօրութեան և այն ազգի
կամ ժողովրդի բարօրութեան համար, որի զարգաց-
ման և յառաջադիմութեան նախանձախնդիր են:

Ընկերութեան բոլոր անդամները պէտք է
խոստանան կատարել հետևեալ կանոնները.

1. Կանանց և օրիորդներին միշտ յարգել և
պաշտպանել, երբ նրանց հետ վարվում են անար-
գար կերպով և անարգում: Այստեղ մենք կարող
ենք լիջել Կլառիուսի խօսքերը իւր որդուն թէ
«մի անպատուիր աղջկանը, որովհետեւ քո մայրը
նոյնպէս աղջիկ է եղել»:

2. Զգուշանալ ամեն տեսակ անբարոյական խօս-
քերից և կեղտոտ և ստոր բաներից: Ինքը Յիսուս
Քրիստոս ասաց, «ձգմարիտ եմ ասում ձեզ, որ
մարդիկ պէտք է հաշիւ տան իրանց արտասանած
ամեն մի բառի համար»:

3. Պէտք է անարատութիւնը հաւասարապէս
պարտաւոր լինի թէ կանանց և թէ տղամարդկանց
համար:

Առաքեալը ասում է. «Այստեղ չկայ ոչ տղա-
մարդ և ոչ կին, այլ բոլորն էլ Քրիստոսի հաւա-
տացեալներն են, Աստծոյ առաջ բոլորն էլ մէկ
են, միայն թէ յանցանքը դարձեալ մնում է յան-
ցանք՝ ով էլ որ կատարի, որովհետեւ միայն մի
ներումն կարող է ազատել մեղաւորին՝ լինի նա
կին թէ տղամարդ»:

4. Այդ հիմնական կանոնները տարածել հա-
սակակից տղայոց մէջ և իրանցից փոքրներին էլ

Համալսարանի Գրադարանի Բաշ շահի (Բաշ շահի Գրադարան)



« Ազգային գրադարան



NL0245051

1750
Պատահաբար է պատահական համար միեւնոյն հեղինակի հետեւեալ
գրեցիլը.

«Կարելի» է արդեօք պատկուել առանց բժշկի խորհրդի»:

1750

